Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունվարի 14-ի N 131 - Ն որոշման

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը	Հղումը
1	2	3	4
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	1. Քաղաքաշինության ոլորտում ներդրումային միջավայրի գրավչության խթանում, կառուցապատման ընթացակարգերի պարզեցում	Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման ներդրումային միջավայրի շարունակական բարելավում՝ հնարավորինս պարզեցված պայմաններով (ըստ օբյեկտների ռիսկայնության աստիճանի) թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի կատարելագործման և դրանցում կոռուպցիոն ռիսկերի հետևողական նվազեցման միջոցով: Այդ թվում՝ - ավարտված շինարարության ընդունող հանձնաժողովներում ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության պարտադիր ներգրավվածության ապահովումը նախատեսել՝ ելնելով շինարարության օբյեկտների ռիսկայնության աստիճանի դասակարգումից - պարզեցնել շինարարության իրականացման և տեխնիկական հսկողության լիցենզիաների տրամադրման կարգերը՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը - հստակեցնել քաղաքաշինական համալիր փորձաքննության իրականացման կարգը՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը	ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.6-րդ կետ

1	2	3	4
		- ճշգրտել կառուցապատման էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգը՝ ՀԲ-ի կողմից տրամադրված դրամաշնորհի (ԻՋՀ No. TF012782) միջոցներով՝ Քաղաքաշինական թույլտվությունների էլեկտրոնային մշակման և մեկ պատուհանից տրամադրման՝ ներկայումս ավարտված ծրագրին լիարժեք համապատասխանությունն ապահովելու նպատակով	
	2. Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի համակարգի համալրում՝ դրանց մշակման և հաստատման գործառույթների օպտիմալացման ու պարզեցման նոր լծակների ամրագրման միջոցով	Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի բացակայության հետևանքով բազմաթիվ համայնքներում իրականացվող անկանոն կառուցապատման կանոնակարգում, թույլտվությունների տրամադրման վերաբերյալ սուբյեկտիվ որոշումների կայացման հնարավորությունների և, հետևաբար նաև, կոռուպցիոն դրսևորումների բացառում: Այդ թվում՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը՝ - կանոնակարգել մինչև 15000 բնակիչ ունեցող համայնքների խմբերի (միկրոտարածաշրջանային միավորների) համար գլխավոր հատակագծերի և պարզեցված գոտիավորման նախագծերի (հողօգտագործման ու կառուցապատման կանոնների) մշակման ու հաստատման գործառույթները՝ մեկ ընդհանուր՝ համակցված միկրոտարածաշրջանային տարածական պլանավորման փաստաթղթում դրանք ամփոփելու միջոցով - գործող իրավական ակտերը համապատասխանեցնել համակցված միկրոտարածաշրջանային տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և հաստատման նոր կարգավորումներին	ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.6-րդ կետ

1	2	3	4
		- իրականացնել համակցված միկրոտարածաշրջանային տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և համակարգման գործառույթներ	
	3. Կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացում	Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգում, այդ թվում՝ - տարածքների կառուցապատման հայեցակարգերի և ներդրումային փաթեթների մշակում (ներառյալ՝ ծավալատարածական և գործառութային համալիր լուծումները) - ներդրողների հետ բանակցային գործընթացի համակարգում	ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.6-րդ կետ
	4. Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման նոր մեթոդաբանության մշակում	- գնագոյացման ոլորտում նոր մեթոդաբանության վերաբերյալ առաջարկությունների մշակում - ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման 3-րդ կետով հաստատված կարգի մեջ համապատասխան փոփոխությունների կատարում - շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման նոր կարգի մշակում - շինարարությունում գնման գործընթացի պարզեցման նպատակով առաջարկների մշակում	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10^1 հոդված ՀՀ կառավարության 2003 թ. փետրվարի 20-ի N 156-Ն որոշման 1-ին կետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ